Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 նոյեմբերի 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-237/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար էլեմենտների և մարտկոցների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-237/23» ծածկագրով գնման ընթացակարգի 3 և 6 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Նարեկ Պողոսյան» ԱՁ-ն և 2024թ. մարտի 11-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Նարեկ Պողոսյան» ԱՁ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-237/23-01/107 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) մատակարարման ժամկետները սահմանված է՝ պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում, որը էականորեն խախտվել է «Նարեկ Պողոսյան» ԱՁ-ի կողմից:

Պայմանագրով սահմանված է նաև.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:
- 2.1.1 կետ՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:
- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, առաջնորդվելով Պայմանագրի դրույթներով, պայմանագիրը լուծել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Նարեկ Պողոսյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Նարեկ Պողոսյան» ԱՁ	87202424	ՀՀ, ք. Երևան, Ռոստովյան 36/33		Առկա է		Որոշում առ 2024 թվականի նոյեմբերի 19-ի Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-237/23»